



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական կրթման թրեյներների հավաքագրման

Ծրագրի մասին

ՀՀ կենտրոնական բանկը «Ֆինանսական կրթությունը գյուղական համայնքներում» և «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրերի շրջանակում հավաքագրում է ֆինանսական կրթման թրեյներներ: ՀՀ բոլոր մարզերից, Երևանից և Արցախից ընտրված դիմորդները ֆինանսական կրթման թրեյներների վերապատրաստման դասընթացը հաջողությամբ ավարտելուց հետո պետք է իրականացնեն անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ դասընթացներ իրենց մարզի ուսուցիչների և գյուղական համայնքների բնակիչների համար:

Թրեյներների հիմնական պարտականություններ

- բարձր որակով և ըստ սահմանված ժամանակացույցի իրականացնել դասընթացներ,
- պատշաճ կերպով և սահմանված ժամկետներում ներկայացնել դասընթացների վերաբերյալ հաշվետվություններ՝ ըստ սահմանված ձևաչափի,
- պարբերաբար թարմացնել գիտելիքները ՀՀ ֆինանսական համակարգի, գործող ծառայությունների և անձնական ֆինանսների այլ թեմաների վերաբերյալ՝ օգտվելով բոլոր հնարավոր աղբյուրներից և տրամադրված կրթական նյութերից:

Ընտրության չափանիշներ

- ֆինանսական/տնտեսագիտական կրթություն (առնվազն բակալավրի աստիճան),
- նմանատիպ աշխատանքային փորձ,
- նոր գիտելիք ձեռք բերելու և փոխանցելու պատրաստակամություն,
- հաղորդակցման զարգացած հմտություններ,
- մարզային հասանելիություն և ճկունություն,
- ռուսերեն և անգլերեն լեզուների իմացությունը ցանկալի է:

Յուրաքանչյուր մարզից ընտրվելու են սահմանափակ քանակությամբ թրեյներներ հայտադիմումի և հարցազրույցի արդյունքների հիման վրա:

Թրեյներների վերապատրաստում

Հարցազրույցի փուլը հաջողությամբ անցած դիմորդները պարտադիր պետք է մասնակցեն թրեյներների վերապատրաստման 5-7-օրյա դասընթացի, որը հնարավորություն կտա նրանց զինվել անհրաժեշտ գիտելիքով և հմտություններով՝ հետագայում արդյունավետ և որակյալ դասընթաց իրականացնելու նպատակով: Վերապատրաստման դասընթացին մասնակցությունն անվճար է. տեղափոխման, գիշերակացի և սնունդի ծախսերը հոգում են կազմակերպիչները:



Ժամկետ

- Թրեյներների վերապատրաստման դասընթաց – **մարտ, 2018թ.**
- Դասընթացներ – **ապրիլ-նոյեմբեր, 2018թ.**՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

Հնարավոր կլինի համատեղել հիմնական աշխատանքի հետ:

Վարձատրություն

Վերապատրաստման դասընթացը հաջողությամբ ավարտած թրեյների հետ կնքվելու է պայմանագիր, որի համաձայն նա վարձատրվելու է գործարքային սկզբունքով յուրաքանչյուր իրականացված դասընթացի համար: Դասընթացները պետք է իրականացվեն 2018 թվականի ապրիլ-նոյեմբեր ամիսներին թրեյների մարզի տարբեր վայրերում տարբեր թիրախային խմբերի համար՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

Դիմելու կարգ և դիմումների ընդունելության վերջնաժամկետ

Եթե ցանկանում եք դառնալ ֆինանսական կրթման թրեյներ, խնդրում ենք մինչև **սույն թվականի փետրվարի 12-ը** ուղարկել լրացված **հայտադիմումը** abcfinance.am@gmail.com էլ. հասցեով՝ նամակին կցելով նաև Ձեր **ինքնակենսագրությունը (CV)**:

Հարցերի կամ լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք դիմել նաև 010 592 697 հեռախոսահամարով: